

ՀՀ 58. 581. 93

Բույսերի էկոլոգիա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԲՈՒՅՄԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ

Քրիստինե ԲԱՂՅԱՆ

Բանալի բառեր՝ էկոլոգիական խումբ, պետրոֆիտներ, կրիոֆիտներ, քսերոֆիտներ, գիգրոֆիտներ, պսամոֆիտներ, հելիոֆիտներ, հալոֆիտներ, կրինոհալոֆիտներ, գլիկոհալոֆիտներ:

Ключевые слова: экологическая группа, петрофиты, криофиты, ксерофиты, гигрофиты, псаммофиты, гелиофиты, галофиты, криногалофиты, гликогалофиты.

Keywords: ecological group, petrofitos, krioфitos, kserofitos, gigroфitos, psamofitos, gelioфitos, galofitos, krinogalofitos, glikogalofitos.

К. Багрян

Экологические виды растений территории Нагорного Карабаха

Экологическая группа - совокупность видов, характеризующаяся сходными потребностями в величине какого-либо экологического фактора и возникшими в результате его воздействия в процессе эволюции сходными анатомо-морфологическими и иными признаками, закрепившимися в генотипе. Нами изучены и представлены виды растений из разных экологических групп, произрастающих на территории Нагорного Карабаха.

Ch. Bagiryan

Ecological Types of the Plants of the Nagorno-Karabakh Territory

The ecological group is a set of types, characterized by similar requirements in the size of some ecological factor and similar morphological and by another signs gaining a foothold in a genotype, arisen as a result of its influence in the process of evolution. We have studied and presented the types of plants from different ecological groups, growing in the territory of the Nagorno-Karabakh.

Տարբեր բույսերի էկոլոգիական խմբերի ուսումնասիրությունները անչափ կարևոր է Լեռնային Ղարաբաղի ֆլորայի պատմության ճանաչման համար: Նրանց տեսակային կազմի որոշումը և արևալի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հայտնաբերել անհետացած տեղին գտնվող տաքսոններին ու հետազայում մտածել նրանց պահպանման և խնայողաբար օգտագործման մասին: Լեռնային Ղարաբաղի գեոմորֆոգեն սուկցեսիան սերտ կապված է դրենաժի որակական փոփոխությունների հետ, մասնավորապես՝ քիմիական կազմի: Հենց ըստ տարբեր էկոլոգիական պայմանների հանդեպ ունեցած հարմարողականությամբ ձևավորվել են բույսերի տարբեր էկոլոգիական խմբերը: Մեր երկրի բուսական աշխարհը հարուստ է և բազմազան, հատկապես եթե այն բաժանենք ըստ էկոլոգիական խմբերի՝ քսերոֆիտների, էվքսերոֆիտների, պահոքսերոֆիտների, մեզոֆիտների, հիդրոֆիտների, հալոֆիտների, էպիֆիտների, պետրոֆիտների և այլն: Մեր կողմից ուսումնասիրվել են տարբեր էկոլոգիական պայմաններում աճող բույսերի տեսակները:

Լեռնային Ղարաբաղը ունի ֆլորայի հարուստ բազմազանություն և նրա բուսական էկոտոպների ծագումը ու նրանց աշխարհագրական տարածումը պայմանավորված է երկրի լեռնային ռելիեֆով, բարձրունքային գոտիականությամբ և բարենպաստ կլիմայական պայմաններով: Հաշվի առնելով բուսական օրգանիզմների կյանքի առանձնահատկությունները, բույսերի էկոլոգիայում շեշտը դրվում է շրջակա միջավայրի այնպիսի էկոլոգիական գործոնների վրա, ինչպիսիք են ջուրը, ջերմությունը, քամին, հողի քիմիական բաղադրությունը, ռելիեֆը և այլն: Կախված էկոլոգիական պայմաններից հարմարվելու ունակությունից Լեռնային Ղարաբաղի տարածքում առանձնացվում են բույսերի հիդրոֆիտ, գիգրոֆիտ, մեզոֆիտ, քսերոֆիտ և կրիոֆիտ էկոլոգիաներ, որոնք զգալիորեն տարբերվում են ինչպես արտաքինապես, այնպես էլ ներքին կառուցվածքով: Ստացված տվյալների ֆլորիստիկ վերլուծությունը իրականացվել է ըստ [Малышев, 1965; Положий, 1965; Юрцев, 1968; Камелин, 1973; Красноборов, 1976; Ревушкин, 1988; Седельников, 1988] և այլ ընդունված մեթոդների, որոնք կիրառվում են բույսերի տեսակների որոշման համար: Հավաքված բույսերից պատրաստվել էին հերբարիումներ, իսկ տեսակները որոշվել էին համապատասխան որոշիչներով: Հալոֆիտ բույսերի էկոլոգիական խմբերի որոշման համար կիրառվել էին որոշ գլիկոհալոֆիտ և հալոֆիտ բուսատեսակների տերմինների DAB ներկման մեթոդը և այլ մեթոդներ: Հալոտարածքներում

ուսումնասիրվել էր նաև այդ բույսերի անատոմո-մորֆոլոգիական առանձնահատկությունները: Բուսատեսակները հավաքվել էին Հայկավանի, Բովուրխանի լեռնային և Ասկերանի անապատային և կիսանապատային գոտիներից: Աշխատանքի նպատակն էր ուսումնասիրել Լեռնային Ղարաբաղի տարբեր գոտիներում և էկոլոգիական պայմաններում աճող բույսերի տեսակները և դասել նրանց ըստ էկոլոգիական խմբերի, որոնք հնարավորություն կտան հետազայում ընդլայնել այդ տարածքի բուսատեսակների տվյալների բազան:

Քսերոֆիտները չոր պայմաններում ապրելուն հարմարված բույսեր են, որոնք կարող են դիմանալ գերտաքացմանը և ջրազրկմանը: Դրանք հիմնականում տափաստանային, անապատային և կիսանապատային բույսեր են: Լեռնային Ղարաբաղի քսերոֆիտ էկոլոգիան պատկանող բուսատեսակներից են.

- Օշինդր բուրավետ – *Artemisia fragrans*
- Շյուղախոտ ոչխարի – *Festuca ovina*
- Շյուղախոտ ակոսավոր – *Festuca sulcata*
- Փետրախոտ լեսինգիի – *Stipa lessingiana*

Այս տեսակները դասվում են նաև պերոքսիտ էկոլոգիին:

Լեռնային Ղարաբաղի ալպյան և այլ գոտիների քարքարոտ տարածքների ֆլորայի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է առանձնացնել այն բուսատեսակների խումբը, որոնք բնորոշ են ֆրիգանոիդ էկոտոպին: Պերոքսիտները համարվում են լեռնային բաց տարածքների բնակիչներ և ժայռերի առաջնային օրգանիզմներ, որոնք աստիճանաբար ստեղծում են բարենպաստ պայմաններ հետազայում այլ բուսատեսակների բնակեցման համար: Որոշ գրականության մեջ **պերոքսիտ** տերմինը փոխարինվում է **լիտոֆիտ** անվանումով (Рудков-1961, ИИИАДЗЕ, -1991, Gravendeel-2004): Ջերմաստիճանային տատանումների լայն ամպլիտուդան, ժայռերի անմիասն ուղղությունը, լեռնային ապարների ֆիզ.քիմիական հատկությունները օրվա ընթացքում յուրահատուկ պայմաններ են ստեղծում քարաժայռային պերոքսիտ բույսերի գոյատևման համար:

Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի Հայկավան տարածքի պերոքսիտ էկոլոգիան պատկանող բուսատեսակներից են.

- Թանթռնիկ հակադրատերև – *Sedum oppositifolium*
- Ուրգ սողացող – *Thymus serpyllum*
- Ուրգ անդրկովկասյան – *Thymus transcaucasicus*
- Կուրկուրան կովկասյան – *Hedysarum caucasicum*
- Անիսոն քարբեկային – *Pimpinella saxifrage* L.
- Կատվադաղձ Մեյերի – *Nepeta meyeri*
- Մատիտեղ ալպիական – *Polygonum alpine*



Նկ.1 Կուրկուրան կովկասյան – *Hedysarum caucasicum*



Նկ.2 Կատվադաղձ Մեյերի – *Nepeta meyeri*

Էկոլոգիական յուրօրինակ խումբ են ներկայացնում էֆեմերոիդները: Էֆեմերոիդները հիմնականում սոխուկավոր, բազմամյա, լուսասեր խոտաբույսեր են, վեգետացիայի կարճ շրջանով: Որոշ էֆեմերոիդներ պատկանում են նաև հելիոֆիտ էկոլոգիական խմբին, այսինքն լուսասերներին: Վաղ գարնանը, դեռ ձյունը չհալած, այս բույսերն արթնանում են և ծածկում դաշտերն ու անտառները բազմազուն ծաղիկներով:

Լեռնային Ղարաբաղի էֆեմերոիդ էկոլոգիական բուսատեսակներից են.

- Աստղաշուշան լեռնային – *Ornithogalum montanum*
- Ղարաբաղյան վարդակակաչ – *Tulipa karabachensis*
- Հայկական վարդակակաչ – *Tulipa armena*
- Հակինթ արևելյան – *Hyacinthus orientalis*

Այս էֆեմերոիդները համարվում են ֆրիգանոիդ բուսատեսակներ:

Հատուկ էկոլոգիական խումբ են կազմում հալոֆիտ բույսերը: Հալոֆիտները աղասեր բույսեր են, որոնք աճում են խիստ աղակալված հողերում: Սրանք աղակուտակիչներ են, ունեն մասլիփայլուն մանր տերևներ ու ընձյուղներ՝ պատված կուտիկուլայի հաստ շերտով: Այս բուսատեսակների բջջապլազման կայուն է աղերի բարձր պարունակության նկատմամբ: Կրիոհալոֆիտներն ունեն աղերի բարձր կլանողականություն, սակայն հյուսվածքներում կուտակված աղի զգալի մասն արտամղում են տերևների հատուկ գեղձային մագիկներով: Գլիկոհալոֆիտներն աճում են քիչ աղոտ, հիմնականում ալկալիացած հողերում: Սրանց արմատային համակարգն ունի ցածր թափանցելիություն աղերի նկատմամբ: Էկոլոգիական տեսակներից 0,7-1,0 % աղերով հողերը համարվում են ուժեղ աղակալած, եթե 0,5 – 0,7 %՝ միջին և 0,3 – 0,5 % թույլ աղակալած հողեր: 1 % – ից ավելի աղերով հողերը կոչվում են աղուտներ:

Լեռնային Ղարաբաղի՝ Ասկերանի շրջանի որոշ տարածքների աղակալված հողերում հալոֆիլ էկոլոգիական բուսատեսակներից աճում է.

- Բալախ եվրոպական – *Salicornia aeuropaea*

Ըստ սուբստրատի քիմիական կազմի հանդեպ ունեցած հարմարողականությամբ տարբերում ենք կալցիոֆիլ էկոլոգիական բույսերը:

- Լեզվապտեր պատի – *Asplenium ruta-muraria*

Asplenium ruta-muraria տեսակը աճում է ժայռաճեղքներում, հիմնականում կրաքարային սուբստրատներում, քարքարոտ վայրերում և բացի դրանից, որ այս բույսը համարվում է կալցիոֆիլ էկոտեսակ այն նաև պետրոֆիտ է: Լեռնային Ղարաբաղը չնայած իր համեմատաբար փոքր տարածքին, աչքի է ընկնում բուսական հարուստ համակենցությունների ու բուսատեսակների բազմազանությամբ: Մատիտեղ ճնճողիկի – *Polygonum aviculare* խոտաբույսը համարվում է ոչ պահանջկոտ բույս և կարող է աճել ինչպես ժայռերի ճեղքներում, այնպես էլ ավազուտներում:

Էկոլոգիական տեսակետից *Polygonum aviculare* բույսը համարվում է ինչպես պտրոֆիտ, այնպես էլ պսամոֆիտ էկոտեսակ:



Նկ.3 Մատիտեղ ճնճղուկի - *Polygonum aviculare*

Այս տեսակը փոխում է գունդանգը տարվա եղանակից և էկոլոգիական պայմաններից կախված: Բույսի սերմերը երկար տարիներ կարող են մնալ հողում և պահպանել ծլունակությունը:

Գրականություն

1. Թ.Գ.Մատրյան, Մ.Լ. Գևորգյան, Ռուսերեն–լատիներեն–հայերեն բուսաբանական տերմինների բառարան : Երևան, 2003թ.:
2. Ա.Գուլյան, Կ.Վ.Բալայան, Բուսանունների լատիներեն–հայերեն-ռուսերեն բուսաբանական տերմինների բառարան : Երևան, 2013թ.:
3. О.Ю.Ермолаева, Синтаксономия растительности высокогорных известняковых массивов Западного Кавказа. Ставрополь, 2005 год.
4. А.А. Гроссгейм, Растительный покров Кавказа. Москва. 1948 год.
5. А.А. Гроссгейм, Определитель растений Кавказа. Москва. 1949 год.
6. Г.Н. Цинцадзе, Петрофильная флора горной Тушетии (восточная часть Большого Кавказа), 1991г.

Տեղեկություններ հեղինակի մասին՝

Քրիստինե Բաղդյան – ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դասախոս:

E-mail: bagiryan.kristina302014@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխափորել խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ., Վ.Տ.Հայրապետյանը: